ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

01 հունիսի 2026 թվականի թիվ 67-Ա

ք. Երևան

«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 14-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 17 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) գործողությունների արդյունքում հայտնաբերել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ, այն է՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում «Լուսավոր Հայաստան» կուսակցության անվճար րոպեներից օգտվելու իրավունքի իրացումը սահմանափակելը:

2025 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողովի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի անունով կազմվել է զեկուցագիր (այսուհետ՝ Զեկուցագիր) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը հանձնարարական տալու խնդրանքով:

Ըստ Զեկուցագրի՝

«(...) 2026 թվականի մայիսի 12-ին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով մուտքագրվել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության գրությունն (մուտքի հ/հ ՄԴ/22-26) առ այն, որ «ՖԱՍԹՍՊՈՐՏ» տեսալսողական ծրագիրը խոչընդոտում է Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անվճար րոպեներից օգտվելու կուսակցության իրավունքի իրացմանը:

Խնդրին սեղմ ժամկետում լուծում տալու նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետ Լիաննա

Դոխիկյանը (այսուհետ՝ Հանձնաժողովի ներկայացուցիչ) 2026 թվականի մայիսի 12-ին ժամը 10:09-ին զանգահարել է «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության աշխատակցին, ներկայացրել խնդիրը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի պահանջները: «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության աշխատակիցը հավաստիացրել է, որ կփորձի պարզել խնդրո առարկա իրավիճակը և կզանգահարի մեկ ժամից: Մեկ ժամից զանգ չստանալուց հետո Հանձնաժողովի ներկայացուցիչը կրկին զանգահարել է նույն աշխատակցին (ժամը 12:37-ին), սակայն կապ հաստատել չի հաջողվել զանգին չպատասխանելու պատճառով: Չստանալով պատասխան՝ Հանձնաժողովի ներկայացուցիչը ժամը 12:43-ին զանգահարել է Հանձնաժողովում առկա «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության մեկ այլ կոնտակտային տվյալով՝ որպես իրավաբան նշված անձի հեռախոսահամարին, սակայն կապ հաստատել չի հաջողվել զանգին չպատասխանելու պատճառով: Այնուհետև ժամը 12:45-ին զանգահարել է «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության տնօրեն Նարեկ Գյուլումյանին, սակայն կապ հաստատել կրկին չի հաջողվել զանգին չպատասխանելու պատճառով: Ժամը 12:46-ին «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության աշխատակիցը, ում հետ առավոտյան հնարավոր էր եղել կապ հաստատել, իսկ 2-րդ անգամ կապ հաստատել չէր հաջողվել, զանգահարել է Հանձնաժողովի ներկայացուցչին, ասել, որ պետք է հասկանան՝ ինչպես են տրամադրելու անվճար բոպեները, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ աշխատակիցը մինչև ժամը 15:00-ն կզանգահարի Հանձնաժողովի ներկայացուցչին, սակայն չի զանգահարել (14.05.26թ. ժամը 11:10-ի դրությամբ):

Ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչությունը նաև գրություն է ուղղել «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջը ապահովելու ուղղությամբ հնարավորինս սեղմ ժամկետում միջոցներ ձեռնարկելու պահանջով, որին կցվել են «Լուսավոր Հայաստան» կուսակցության գրությունը և գրության առդիրները: Գրությունը Հանձնաժողովի քարտուղարության՝ secretariate@tvradio.am էլեկտրոնային հասցեից ուղարկվել է 2026 թվականի մայիսի 12-ին ժամը 15:13-ին «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության՝ info@fastmedia.am և narek.gyulumyan@softconstruct.com էլեկտրոնային հասցեներին, իսկ ավելի ուշ գրությունը նաև առաքվել է փոստային բաժանմունքի միջոցով: 2026 թվականի մայիսի 13-ին գրությունը secretariate@tvradio.am էլեկտրոնային հասցեից ուղարկվել է նաև հանձնաժողովում առկա «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության մեկ այլ՝ karapet.boyajyan@softconstruct.com էլեկտրոնային հասցեին:

(...) [Ո]չ մի գրություն կամ գրությունը ստանալու հաստատում չի ստացվել, չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովի քարտուղարության բաժնից ևս զանգահարել են «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերություն, տեղեկացրել էլեկտրոնային հասցեներին ուղարկված գրության մասին, ինչպես նաև խնդրել, որպեսզի հաստատեն գրության ստացումը:

(...) Վերոնշյալը պարունակում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի խախտման հատկանիշներ(...)»:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2026 թվականի մայիսի 14-ի Զեկուցագիրը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 թվականի մայիսի 14-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 17 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2026 թվականի մայիսի 15-ին թիվ Ե/04/04.1/356-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 21.05.2026 թվականին ներկայացրել է պարզաբանում, որում մասնավորապես նշված է՝

«(...) «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ին պատկանող «ՖԱՍԹ ՍՊՈՐՏՍ» ծրագիր հեռուստաալիքը հանդիսանում է բացառապես սպորտային հեռուստաալիք, վերջինիս եթերը նախատեսված է սպորտային իրադարձությունների ցուցադրման համար, տվյալ հեռուստաալիքով անգամ բացակայում են լրատվական թողարկումները, այսինքն հեռուստաալիքը որդեգրել է պրոֆեսիոնալ սպորտային հեռուստաալիք լինելու ուղղությունը, հետևաբար նաև քաղաքական առումով դրսևորել և շարունակում է դրսևորել չեզոքություն:

Հեռուստաալիքի գործունեությունը միտված է հայ հեռուստադիտողին ներկայացնելու կարևոր սպորտային միջոցառումները, որոնց ցուցադրությունը հիմնականում իրականացվում է անընդհատ և չընդհատվող ռեժիմով, որպիսի պայմաններում հեռուստաալիքը բոլոր իրավիճակներում առաջնորդվում է հիմնական նպատակին համահունչ որպես սպորտային հեռուստաալիք ցուցադրում է բացառապես սպորտային իրադարձություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը խնդրում ենք սույն վարույթի շրջանակներում հաշվի առնել հեռուստաալիքի բնույթը և քաղաքական չեզոքություն պահպանելու կարևորությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ բարձր ենք գնահատում գործընկերային հարաբերությունները Հեռուստաուռեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ աշխատանքներում, ուստի ծանուցման մեջ նշված հանգամանքները կապված հեռախոսազանգերի և կոմունիկացիոն խնդիրների վերաբերյալ ուսումնասիրվում են հանգամանալից կերպով և վստահեցնում ենք, որ յուրաքանչյուր դեպք գնահատվելու է և հանգուցալուծվելու է խիստ եղանակով:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը կոմունիկացիոն խնդիրների համար»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի

մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝

Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 90 րոպե, հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 150 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 25-ական րոպե:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 19-Ա որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) 4-րդ կետը սահմանում է.

Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամի մշտադիտարկումն իրականացվում է համաձայն հրապարակված վճարովի եթերաժամանակի արժեքի սահմանման և եթերաժամանակի տրամադրման կարգի «Հայաստանի Հանրապետության

ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը, հանդիսանալով տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ Հեռարձակող, պարտավոր էր պահպանել օրենքների սահմանված կարգավորող դրույթները:

Այսպես, քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2023 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն, լիցենզիայի սերիան և համարը՝ ԵՀ № 352, գործողության ժամկետը՝ 23.09.2023թ.- 23.09.2030թ.):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի և Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝

Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 90 րոպե, հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 150 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 25-ական րոպե:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի վերաբերյալ Հեռարձակողի ներկայացված բացատրություններն ու պարզաբանումները, որի արդյունքում արձանագրում ենք հետևյալը.

«Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության պարզաբանմամբ «ՖԱՍԹ ՍՊՈՐՏՍ» ծրագիր հեռուստաալիքը հանդիսանում է բացառապես սպորտային հեռուստաալիք, վերջինիս եթերը նախատեսված է սպորտային իրադարձությունների ցուցադրման համար, տվյալ հեռուստաալիքով անգամ բացակայում են լրատվական թողարկումները, այսինքն՝ հեռուստաալիքը որդեգրել է պրոֆեսիոնալ սպորտային հեռուստաալիք լինելու ուղղությունը, հետևաբար նաև քաղաքական առումով դրսևորել և շարունակում է դրսևորել չեզոքություն:

Այսպես, Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունների և պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ

վերջիններիս բովանդակությամբ չեն հերքվել վարչական վարույթի շրջանակներում արձանագրված փաստական հանգամանքները և չեն ներկայացվել այնպիսի հիմնավորումներ, որոնք կարող էին բացառել Հեռարձակողի կողմից օրենքով սահմանված պարտականությունների խախտման փաստը:

Մասնավորապես՝ Հեռարձակողը, վկայակոչելով «ՖԱՍԹ ՍՊՈՐՏՍ» տեսալսողական ծրագրի բացառապես սպորտային ուղղվածությունը և քաղաքական չեզոքություն պահպանելու հանգամանքը, ըստ էության փորձել է հիմնավորել, որ տվյալ հեռուստաալիքի գործունեության առանձնահատկությունները պայմանավորում են ընտրական գործընթացներին առնչվող բովանդակության հեռարձակումից հնարավորինս զերծ մնալու մոտեցումը:

Սակայն Հանձնաժողովն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը կրում են հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող բոլոր հեռարձակողները՝ անկախ նրանց ծրագրային ուղղվածությունից, թեմատիկ մասնագիտացումից կամ խմբագրական քաղաքականությունից: Օրենսդիրը որևէ բացառություն չի նախատեսել սպորտային, ժամանցային կամ այլ մասնագիտացված տեսալսողական ծրագրերի համար:

Հետևաբար Հեռարձակողի կողմից ներկայացված այն պատճառաբանությունը, թե հեռուստաալիքը հանդիսանում է բացառապես սպորտային ուղղվածության և ձգտում է պահպանել քաղաքական չեզոքություն, չի կարող դիտվել որպես ընտրական օրենսդրությամբ սահմանված պարտականությունների չկատարման իրավաչափ հիմք:

Ավելին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին անվճար եթերաժամ տրամադրելու պարտականությունը բխում է օրենքի իմպերատիվ պահանջներից: Նման պարտականության իրականացումը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական դիրքորոշման արտահայտում կամ որևէ քաղաքական ուժի աջակցություն, այլ հանդիսանում է օրենքով սահմանված հանրային-իրավական պարտականության կատարում:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանմամբ չեն հերքվել նաև վարչական վարույթի նյութերով հաստատված այն հանգամանքները, որ Հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից բազմակի փորձեր են կատարվել կապ հաստատելու Ընկերության ներկայացուցիչների հետ խնդրին հնարավորինս սեղմ ժամկետում լուծում տալու նպատակով, սակայն պատշաճ արձագանք չի ապահովվել:

Քննարկվող հարցի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ միջազգային փորձին: Այսպես, «Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը» վերտառությամբ Եվրոպայի խորհրդի ձեռնարկի համաձայն՝

«Ընտրական քարոզարշավը ընտրողների կարծիքի ձևավորման համար առաջնային և առանցքային գործոնն է:»[1]:

---

[1]«Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը»//Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար/Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2016թ., Տպագրված է Եվրոպայի խորհրդի կողմից, 87 էջ: https://rm.coe.int/using-international-election-standards-arm-final/1680712230 [8/4/2025]

«(...) [Ը]նտրողների քվեի համար պայքարելիս, թեկնածուները և քաղաքական կուսակցությունները, մասնավորապես, պետք է ունենան գործելու հավասար պայմաններ, ինչպես նաև կարծիք ունենալու և արտահայտվելու ազատություն:»[2]:

«Ընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր քաղաքական ուժերը և թեկնածուները պետք է ունենան քաղաքական քարոզարշավում ներգրավվելու ազատություն և իրենց ծրագրերը ընտրազանգվածի շրջանում ազատ և հավասար պայմաններում տարածելու հնարավորություն (ԺՀՄԻԳ, 1966 թ. Հոդված 25-6, ԺԸԱՄԻ 2014ա, 214): Սա ենթադրում է քարոզարշավի համար հավասար ժամանակի տրամադրում և պետության կողմից թեկնածուներին հավասար վերաբերմունքի արժանացնելու իր պարտավորության կատարում՝ հաշվի առնելով թերներկայացված խմբերի հատուկ կարիքները և հիմնարար ազատությունների տրամադրումը, և, իհարկե, թեկնածուների՝ արդար վարքագիծ դրսևորելու հանձնառություն:»[3]:

Տվյալ պարագայում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի հիմքում դրված են հենց այս պայմաններն ու իրավունքները կիրառելու համար անհրաժեշտ դրույթները:

Եվ այսպես Հանձնաժողովը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրելով վարչական վարույթի շրջանակում ձեռք բերված փաստերն ու ապացույցները, հիմք ընդունելով օրենքների դրույթները, արձանագրում է հետևյալը.

«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը, հանդիսանալով տեսալսողական մեդիածառայություն մատուցող, չի ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցության՝ օրենքով երաշխավորված անվճար եթերաժամից օգտվելու իրավունքի պատշաճ իրացումը և որի գործողությունների արդյունքում սահմանափակվել է ընտրություններին մասնակցող կուսակցության՝ օրենքով երաշխավորված անվճար եթերաժամից օգտվելու իրավունքի իրացումը, ինչով խախտվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույթների պահանջները:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ առկա են «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության միջոց կիրառելու բավարար իրավական հիմքեր:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող

[2]Տե՛ս նույն ձեռնարկի, նույն էջում:
[3] Տե՛ս նույն ձեռնարկի, նույն էջում:

օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը, 93-րդ հոդվածի 2–րդ մասը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 32-րդ հոդվածի 1-ին մասի, 11-րդ, 12-րդ և 14-րդ կետերը, 56-րդ հոդվածը, Մեթոդաբանության 4-րդ կետը և ղեկավարվելով Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ *գրավոր նախազգուշացում:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. հունիսի 01
ք.Երևան